Բուսաբուծության ներառական արժեշղթաների խթանումը Հայաստանում, Վրաստանում, Ղազախստանում և Մոլդովայում ծրագիր

ՀԱՁՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևան, 2019

«Օրգանական միրգ արտադրողների» կոոպերատիվի
հաջողության պատմությունը

«Օրգանական միրգ արտադրողների» սպառողական կոոպերատիվը օրգանական թարմ մրգերի արտադրությամբ զբաղվող նորաստեղծ կազմակերպություն է Հայաստանում: Այն ստեղծվել է 2016թ. 15 ֆերմերների նախաձեռնությամբ, որոնցից յուրաքանչյուրը ներդրում ունեցավ կոոպերատիվի ձևավորման գործում: Կոոպերատիվի անդամ է նաև «Ծիրանի այգի» ՍՊԸ-ն, որը 2002 թ-ից զբաղվում է օրգանական գյուղատնտեսությամբ:

Ծիրանի բերքահավաքը կոոպերատիվի այգիներում

Օրգանական պտղի պահանջարկը տարեցտարի աճում է: Բացի հայաստանյան մթերող կազմակերպություններից՝ Թամարա Ֆրութ, Սիս Նատուրալ, Երևանի Արարատ հյութերի գործարան և Կիլիկիա ընկերություն, վերջին տարիներին նաև զգալի չափով աճել է Հայաստանից արտերկիր օրգանական մթերքի արտա-հանման պահանջարկը: Ի տարբերություն օրգանականի՝ ավանդական եղանակով արտադրված պտղի վաճառքը շատ անկանխատեսելի է: Վերջին տարիներին օրգանական ծիրանի որոշ տեսակների համար մթերման գինը կազմել է 180 - 200 դրամ, իսկ նույն տեսակի ավանդական եղանակով աճեցված հարևանությամբ գտնվող այգիների ծիրանը ֆերմերները վաճառում էին առավելագույնը 50 դրամով: Ակնհայտ էր, որ օրգանական պտղի պահանջարկն առկա է և օրեցօր ավելանալու միտում ունի: Խորհրդակցելով այգու պատասխանատուների հետ եկան այն համոզմանը, որ օրգանական պտուղ արտադրելը ավելի շահավետ է և արտադրված պտուղը անմնացորդ կարող են վաճառել:

Նարեկ Կարապետյանը «Օրգանական միրգ արտադրողների» սպառողական կոոպերատիվի ամենաերիտասարդ համահիմնադիրն է: Նա 2017-2018թթ ընթացքում կոոպերատիվի մյուս 14 անդամների հետ միասին մասնակցեց կոոպերատիվների կառավարմանը և օրգանական այգիների մշակմանը նվիրված մի շարք սեմինարների Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD) ֆինանսավորմամբ՝ «Բուսաբուծության ներառական արժեշղթաների խթանումը Հայաստանում, Վրաստանում, Ղազախ-

Նարեկ Կարապետյանը (աջից 1-ինը) կոոպերատիվի իր գործընկերների հետ միասին՝ սեմինար-պարապմունքի ժամանակ

ստանում և Մոլդովայում» ծրագրի շրջանակներում: Հայաստանում սեմինարների կազմակերպիչը «Շեն» ԲՀԿ-ն էր:

Սեմինարների և գործնական պարապմունքների շնորհիվ Նարեկը և կոոպերատիվի մյուս անդամները ձեռք բերեցին այգիների օրգանական մշակության համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, ծանոթացան այգիների օրգանական խմբային սերտիֆիկացման գործընթացի առանձնահատկություններին, կոոպերատիվի կառավարման, կոոպերատիվի զարգացման ռազմավարություն մշակելու և շուկայավարության լավագույն փորձին:

Կոոպերատիվի անդամները ծիրանի բերքը բեռնում են Սիս Նատուրալ ընկերության մեքենան

Սեմինարների և փորձի փոխանակման շնորհիվ, Նարեկն ու կոոպերատիվի մյուս անդամները համոզվեցին, որ անցումը օրգանական մշակության իրենց հնարավորություն է ընձեռելու շուկայում առավել շահեկան դիրք զբաղեցնելուն, իսկ որակյալ բերք ստանալու և բերքատվությունն ավելացնելու համար անհրաժեշտ է կիրառել օրգանական մշակության համար ագրոտեխնիկական բոլոր պահանջները: Կոոպերատիվի անդամները համոզվեցին նաև, որ համատեղ ջանքերով հնարավոր է շուկայում պաշտպանել օրգանական արտադրողի շահերը, քանզի շատ կա ոչ սերտիֆիկացված մթերք՝ մակնշված որպես օրգանական:

Կոոպերատիվն այժմ գյուղատնտեսական տեխնիկա ունի՝ տրակտորներ, սրսկիչ, ֆրեզ (ձեռք են բերվել ԵՄ և Ավստրիական զարգացման գործակալության աջակցությամբ), որով կատարվում է անդամների այգիների մշակությունը՝ բուժումը, կրծողների դեմ պայքարը, ոռոգման առուների թարմացումը, միջշարային տարածությունների փխրեցումը և այլն:

Կոոպերատիվի գյուղատնտեսական հատուկ տեխնիկան՝ նախատեսված այգիների մշակության համար

Կիրառելով դասընթացների ժամանակ ձեռք բերված գիտելիքները և օգտագործելով կոոպերատիվի տեխնիկական միջոցները՝ Նարեկի և մյուս անդամների այգիների աճը ավելի լավացավ, բերքատվությունն ավելացավ մոտ 20 տոկոսով: Առաջին իսկ տարում, օրգանական սերտիֆիկացման անցումային փուլում, ծիրանի որոշ տեսակներ վաճառեցին վերամշակող գործարանին՝ Սիս Նատուրալ ընկերությանը 25 դրամով բարձր գնով: Կոոպերատիվի բոլոր անդամների ընդհանուր բերքը 2018 թվականին եղել է 210 տոննա: Սերտիֆիկացման անցումային շրջանի ավարտից հետո՝ 2019 թվականին օրգանական ծիրանի որոշ տեսակներ, որոնք օգտագործվում են կոմպոտի

արտադրության համար, հնարավոր կլինի վաճառել մթերող ընկերություններին 180-200 դրամով 75 դրամի փոխարեն:

Նարեկի և կոոպերատիվի մյուս անդամների մշակած զարգացման 2018թ ծրագրի առաջին պլանում սառնարանի ստեղծումն էր և միանման արկղերի ձեռքբերումը: Ծրագիրը «Շեն» ԲՀԿ-ի կողմից հավանության արժանացավ և գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի ֆինանսավորմամբ 2018թ կյանքի կոչվեց: 2018թ. կոոպերատիվի սառնարանը անխափան աշխատեց:

Կոոպերատիվի սառնարանը՝ կառուցված IFAD դրամաշնորհի միջոցներով

Նարեկ Կարապետյանն ասում է. «Ինձ համար բախտորոշ էր մեր կոոպերատիվի ստեղծումը և Շենի հետ համագործակցությունը: Տարիներ շարունակ աշխատելով, կռիվ տալով հողի, ծառի և բնության հետ՝ երբեմն պարտված էի դուրս գալիս: Աշխատանքիցս ստացած եկամուտը համարժեք չէր իմ չարչարանքին և դա ինձ բերել էր խորը հուսահատության: Որոշել էի թողնել իմ տնկած, փայփայած այգին, մեր գյուղը և շատ հայրենակիցներիս նման բախտ որոնել օտար ափերում: Օրերից մի օր հանդիպեցի իմ այգու հարևան Հայկարամ Սարուխանյանին ով ինձ ներկայացրեց կոոպերատիվ ստեղծելու, այգիների օրգանական մշակման եղանակների և դրանից բխող օգուտների մասին: 14 համախոհներով որոշեցինք դիմել IFAD ֆինանսավորած ծրագրին: Հավատացինք կոոպերատիվի զարգացման հեռանկարին և չսխալվեցինք: Իմ կյանքում կոոպերատիվին անդամագրվելը ճակատագրական էր: Մի գեղեցիկ օր ծիրանի բերքահավաքի ժամանակ սիրահարվեցի բերքահավաքի եկած աղջիկներից մեկին և բերքահավաքի ավարտին ամուսնացանք: Ես մնացի հայրենի գյուղում, զգացի օրգանական մշակության առավելությունը ավանդական մշակության համեմատ: Վերջին երկու տարիներին եկամուտներս զգալի չափով ավելացել են:»

«Միասին մենք ուժե՛ղ ենք». Պտղաբուծական կոոպերատիվն ավելացնում է իր արտադրությունը

Սանդրո Երգենյանը Տավուշի մարզի Բերդավան համայնքի «Բերդավան» պտղաբուծական կոոպերատիվի համահիմնադիրներից է: 2016-2017թթ. ընթացքում նա կոոպերատիվի մյուս 41 անդամների հետ միասին, մասնակցեց կոոպերատիվների կառավարմանը և պտղատու այգիների արդյունավետ մշակմանը նվիրված սեմինարների շարքին, որոնք իրականացվել էին Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD) ֆինանսավորմամբ՝ «Բուսաբուծության ներառական արժեշղթաների խթանումը Հայաստանում, Վրաստանում, Ղազախստանում և Մոլդովայում» ծրագրի շրջանակներում: Հայաստանում սեմինարների կազմակերպիչը «Շեն» բարեգործական ՀԿ-ն էր:

Կոոպերատիվի անդամները՝ սեմինար պարապմունքի ժամանակ

Սեմինարների ընթացքում Սանդրոն ու կոոպերատիվի մյուս անդամները ծանոթացան կոոպերատիվների կառավարման լավագույն փորձին և գործնական պարապմունքների միջոցով ձեռք բերեցին կոոպերատիվների զարգացման ռազմավարություններ մշակելու և շուկաներն ուսումնասիրելու հմտություններ: Զուգահեռաբար տեսական ու գործնական դասընթացների միջոցով կոոպերատիվի անդամները ծանոթացան պտղատու այգիների մշակության ժամանակակից մեթոդներին: Սեմինարի մասնակիցների համար 2017 թ. փոխայցելություն կազմակերպվեց խաղողի մշակությամբ հայտնի Պառավաքար գյուղ (Տավուշի մարզ):

Սեմինարների և գործնական պարապմունքների ավարտին, Սանդրոն և կոոպերատիվի մյուս անդամներն արդեն կարողանում էին բիզնես պլան մշակել, գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքային հաշվարկներ կատարել, ինչպես նաև «Բերդավան» կոոպերատիվի պոտենցիալ ծառայությունների գույքագրում իրականացնել: Բացի այդ, սեմինարի ավարտին կոոպերատիվի անդամները

Կոոպերատիվի անդամները՝ գործնական պարապմունքի ժամանակ

գործնականում համոզվեցին, որ այգիների բերքատվությունն ավելացնելու համար անհրաժեշտ է կիրառել ագրոնոմիական բոլոր պահանջները (օրինակ՝ միջշարային տարածությունների հերկը): Սանդրոն և իր ընկերներն այժմ զինված են նաև լավագույն բուժանյութերի կիրառման հմտություններով:

Սեմինարների արդյունքներն իրենց երկար սպասեցնել չտվեցին: Կիրառելով դասընթացի ընթացքում ձեռք բերված ագրոնոմիական գիտելիքները և օգտագործելով կոոպերատիվի տեխնիկական միջոցները (ձեռք են բերվել 2013թ.-ին ֆրանսիական «Օրանժ» հիմնադրամի և «Շեն Ֆրանսիա» կազմակերպության աջակցությամբ) արդեն 2018 թ. Սանդրոն իր դեղձի այգու բերքատվությունը բարձրացրեց 30 տոկոսով: Նման հաջողություններ գրանցեցին «Բերդավանի» մյուս անդամներն ևս:

Կոոպերատիվի տրակտորն իրականացնում է խաղողի այգու վար

Պարզ դարձավ նաև, որ կոոպերատիվի անդամներն արդեն բավարար քանակի որակյալ բերք կարող են ունենալ: Որակյալ բերքը միասնաբար իրացնելու համար Սանդրոն ու իր ընկերները սառնարան կառուցելու որոշում կայացրեցին: Սառնարանը կոոպերատիվի անդամներին հնարավորություն կտար մեկտեղել, կուտակել և տեսակավորել իրենց արտադրանքը՝ այդպիսով ավելի գրավիչ դարձնելով մեծածախ գնորդների համար: Հենվելով սեմինարների ընթացքում ձեռք բերված գիտելիքների վրա՝ «Բերդավան»-ցիները սառնարանի կառուցման բիզնես ծրագիր մշակեցին, որը 2018թ. վերջին արժանացավ «Շեն» բարեգործական ՀԿ-ի հավանությանը և ֆինանսավորվեց 5,200,000 դրամով: Կոոպերատիվի անդամները սառնարանի կառուցման գործում իրենց ներդրումն ունեցան. նրանք սեփական ձեռքերով իրականացրեցին շինարարական աշխատանքները: Արդյունքում, Բերդավան համայնքի մանկապարտեզի չօգտագործվող կաթսայատունը վերածվեց կոոպերատիվի սառնարանի (20 տոննա տարողությամբ): Սառնարանը պատրաստ է ընդունել 2019 թ.-ի բերքը:

Կոոպերատիվի սառնարանը պատրաստ է ընդունել 2019թ. բերքը

Սանդրո Երգենյանն ասում է. «IFAD-ի և Շեն-ի սեմինարները մեզ հնարավորություն տվեցին ավելի լավ գիտակցել մեր կոոպերատիվի ներուժը: Սառնարանի հիմնումը հնարավորություն կտա կուտակել ու ավելի բարձր գնով վաճառել մեր արտադրած դեղձն ու խաղողը: Իսկ ձմռան ամիսներին սառնարանում կպահեստավորենք մեր այգիների արքայանարիջն ու տոներին ընդառաջ այն ավելի բարձր գնով կվաճառենք: Կոոպերատիվի շնորհիվ հոգսն էապես թեթևացել է: Հիմա կոոպերատիվի մյուս անդամների հետ նախապես պլանավորում ենք բոլոր աշխատանքները: Կոոպերատիվի իմ ընկերներին եմ դիմում, երբ ինչ-որ կասկածելի հիվանդություն եմ հայտնաբերում այգումս: Յուրաքանչյուրն իր գիտելիքի ու փորձի չափով օգնում է ինձ: Շատ հարցերում էլ ես եմ իրենց օգնում: Համատեղ կարողացանք լուծել ոռոգման ջրի հարցն անգամ: Միասին մենք ուժեղ ենք:

Սանդրո Երգենյանն իր խաղողի այգում

Ճաղատ կոոպերատիվը հավելյալ արժեք է ստեղծում համայնքում

Լևոն Ենգիբարյանը Սյունիքի մարզի Ճաղատ գյուղի բնակիչ է: Նա մեկն է այն երիտասարդներից, որ 2014 թվականին նախաձեռնեցին կոոպերատիվի հիմնումը Ճաղատում: Կոոպերատիվը հիմնվել է 52 անդամների կողմից, որոնք համագործակցությամբ նպատակ են ունեցել դաշտավարությունն ավելի արդյունավետ դարձնել, նվազեցնել ծախսերը և ավելացնել յուրաքանչյուր անդամի տնտեսության եկամուտները: Տեղակայված լինելով ծովի մակերևույթից 1750 մետր բարձրության վրա՝ Ճաղատը գյուղատնտեսության վարման սահմանափակ հնարավորություններ է ընձեռում: Լևոնը, ինչպես համայնքի բնակիչների մեծ մասը, զբաղվում է հաճարի և կտավատի մշակությամբ: Ճաղատը հայտնի է բարձրորակ հաճարով, որից ավանդական հայկական ուտեստ՝ ձավար են պատրաստում: Սակայն ձավար արտադրելու համար Լևոնը ստիպված էր հաճարը տեղափոխել 40 կմ հեռավորությամբ գտնվող Ույծ գյուղում գտնվող արտադրամաս ու մի կլորիկ գումար վճարել վերամշակման համար: Ճաղատցիները նաև բարձրորակ կտավատ են մշակում: Նախկինում գյուղում եղել է ձիթհան կայան, որի քարից պատրաստված հնագույն սարքավորումները, այսօր պահվում են գյուղի թանգարանում: Լևոնն իր կտավատից յուղ էր ստանում Կոտայքի մարզում՝ 240 կմ հեռավորությամբ գտնվող արտադրամասում:

Ճաղատ կոոպերատիվի վարչության անդամ Լևոն Ենգիբարյանը

Քարի ձիթհանը Ճաղատի պատմության թանգարանում

Սեփական վերամշակման արտադրամասեր ունենալու գաղափարը կոոպերատիվի վարչության անդամների գլխում պտտվում էր դեռ վաղուց: Չէ որ հաճարն ու կտավատը բավական բարձր հավելյալ արժեք են ստեղծում այն դեպքում, երբ վերամշակվում են: Հաճարի շուկայական գինը կիլոգրամի համար 100-120 դրամ է, իսկ ձավարի գինը՝ 300-350 դրամ: Կտավատի սերմի 1կիլոգրամը 600-800 դրամ է, իսկ նրանից ստացված յուղի գինը տատանվում է 1 լիտրը 5000-6000 դրամի սահմաններում:

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD) ֆինանսավորմամբ՝ «Բուսաբուծության ներառական արժեշղթաների խթանումը Հայաստանում, Վրաստանում, Ղազախստանում և Մոլդովայում» ծրագրի շրջանակներում և «Շեն» բարեգործական ՀԿ-ի օգնությամբ կոոպերատիվի անդամները նախաձեռնեցին հաճարի ձավարի և կտավատի յուղի արտադրամասերի հիմնումը: Շինությունները հատկացվեցին համայնքի կողմից, նորոգման աշխատանքները կատարեցին կոոպերատիվի անդամները: Արտադրամասերի հիմնմանը զուգահեռ Շենը ուսուցումների շարք է կազմակերպել: Դրանք վերաբերում էին կոոպերացիայի սկզբունքներին, համատեղ աշխատելուն, համագործակցությանը, կոոպերատիվի կառավարմանը, բիզնես պլանավորմանը, շուկայավարմանը և այլն: «Դասընթացներից պարզ էր, որ կոոպերատիվը էականորեն տարբերվում է մեր պատկերացրածից, կոոպերատիվը մի գործիք է, որը նպաստում է անդամների եկամուտների ավելացմանը, այլ ոչ թե միայն կոոպերատիվի՝ որպես կազմակերպության» - ասում է Լևոնը, «այս առումով անդամների ակտիվությունը նպաստում է հենց իրենց տնտեսությունների եկամուտների ավելացմանը՝ միաժամանակ նպաստելով կոոպերատիվի կայունությանը: Ես, որպես կոոպերատիվի վարչության անդամ, խրախուսում եմ մեր կոոպերատիվի անդամների մասնակցությունը վարչության նիստերին, որպեսզի ներկա լինեն և մեզ հետ միասեն հաշվարկեն կոոպերատիվի ծառայությունների ինքնարժեքը, մասնակցեն աշխատանքների պլանավորմանը: Փորձում ենք առավելագույնս թափանցիկ աշխատել, որպեսզի մեր անդամները վստահեն մեզ»:

Կոոպերատիվի անդամները՝ սեմինար պարապմունքի ժամանակ

Կոոպերատիվի ձավարաղացը

Յուղի արտադրամասը

IFAD ծրագրի 4,850,000 դրամ դրամաշնորհով համաֆինանսավորվեց հաճարի ձավարաղացի և կտավատի ձեթի արտադրամասերի հիմնումը: Սա լուրջ խթան է հաճարի և կտավատի արտադրության ծավալների մեծացման, արժեշղթաներում կոոպերատիվի անդամների ներգրավման առումով:

Կոոպերատիվի անդամները, ամբողջ համայնքը, հարակից համայնքները, որոնք հաճար և կտավատ են մշակում, օգտվելու են արտադրամասերից: Կոոպերատիվը կարող է վերամշակել տարեկան մինչև 300 տոննա հաճար և 25 տոննա կտավատ: Կոոպերատիվը հեռահար պլաններ ունի վաճառքի շուկաներ մուտք գործելու առումով. նախատեսում է բրենդավորել իր արտադրանքը և շուկա մտնել նոր ապրանքանիշերով: Կոոպերատիվի միջոցով շուկայում որոշակի տեղ զբաղեցնելը կնպաստի հավելյալ արժեքի ստեղծմանը, իսկ դա լուրջ խթան է անդամների և առհասարակ համայնքի զարգացման համար: